ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի օգոստոսի 4 -ի 398 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ **մասով** և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N1 հավելվածի 19-րդ կետի 24-րդ ենթակետը և 20-րդ կետը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով հաստատված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2026 թվականի հուլիս ամսվա ընթացքում հատուկ առաջադրանքները և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի աշխատակիցներին պարգևատրել՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ Անահիտ Մանուկյանին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ գործառույթները:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 8/4/2026 12:11:37 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. օգոստոսի
ք. Աշտարակ